ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲԽ-ԷՍ-2018/128, 20.12.2018թ.

Բողոք բերող անձ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ

Պատվիրատու «Երևանի Վ.Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամ

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՊԼՀ-ԳՀՇՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել՝ «ԵՊԼՀ-ԳՀՇՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը կամ պարտավորեցնել՝ «ԵՊԼՀ-ԳՀՇՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները բաժնում, Հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հրավերը համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Ասատրյանս» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 48/1,
Սախարովի բիզնես կենտրոն, 5 հարկ
հեռ: (099) 54 33 88
Էլ.փոստ՝ general@asatryans. com

Պատվիրատու՝ «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 42
Հեռ: +*37411300-111/255/*
Էլ.փոստ՝ *gnumner.eplh@mail.ru*

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան
«ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների
ձեռքբերման նպատակով հայտարարված
<<ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Սույն ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. դեկտեմբերի 21-ը, ժամը 10:00-ն:

Ընթացակարգի առարկան է հանդիսանում «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ «Աուդիտորական ծառայության» ձեռքբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	Աուդիտորական ծառայություն

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ
ԱՆՁ
Մուտք N 62042.18
20.12.2018

Ընթացակարգի հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» վերտառությամբ 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները

Մասնագետների աշխատանքային փորձը		
որակավորումը	*ժամանակահատվածը*	*գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը*
Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ:	*Վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ ունված որակավորմամբ և 5 տարվա փորձ ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում: Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը նվազագույն 5 տարի:*	*Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ: Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ*

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել է հետևյալը՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

22 դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /22 դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79211190	**Ձեռքբերվող Ծառայության նկարագիր** **Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ** Աուդիտի պետք է ենթարկվի ՀՀՄՍ-ների համապատասխան պատրաստված Պատվիրատուի տարեկան համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբեր 2018 թվական, այդ ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվությունը և այլ բացատրական ծանոթագրություններ. Պատվիրատուի եկամուտները 2018 թվականի ընթացքում կազմում է մոտ 1,3 մլրդ 22 դրամ Անցկացված աուդիտի արդյունքում աուդիտ իրականացնող անձը պետք է արտահայտի կարծիք առ 31-ը դեկտեմբեր 2018 թվականի և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, ինչպես նաև հաստատի www.Azdarar.am կայքում հրապարակվող տեղեկությունները՝ Պատվիրատուի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:	դրամ			գ. Երևան, Թումանյան 42	*Գնումների մասին" 22 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում*

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի *միասնական կանոններով* մրցակցային, թափանցիկ, *համաչափ*, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով *մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում*:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է *ամբողջությամբ և հստակ նկարագրեն* ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարաբերյալ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար *չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.*

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և *այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք *պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.*

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) *եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝*

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը գրաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը գրաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Գտնում ենք, որ «ԵՊԼՀ-ԳՀՄՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև Կարգի 64-րդ կետի պահանջների խախտում, մասնավորապես.

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանվել է, որ պայմանագրի կատարման համար պահանջվում են ***միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ, որոնք ունեն վերջին 5 տարվա մեջ եվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում, իսկ որպես գործունեության ոլորտը և կատարված աշխատանքները պահանջվել է հետևյալը. կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5***

տարվա փորձ: Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն: Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ:

Այսպես.

1. Բացարձակ սուբյեկտիվ է Ընթացակարգի հրավերով ամրագրված հետևյալ արտահայտությունը՝ ***«Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ»***, քանզի նման ձևակերպման պայմաններում ցանկացած միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված աուդիտորները կարող են չընդունվել պատվիրատուի կողմից՝ նման լղոզված և ոչ հստակ ձևակերպման պայմաններում, քանզի չկա պատվիրատուի համար ընդունելի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների ցանկ, որով ղեկավարվելով՝ ծառայություն մատուցողը կարող է առաջնորդվել:

2. Բացի այդ, ցանկանում ենք ՀՀ գնումների հետ կապված բոլորիս քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի ծառայությունների մատուցման համար պահանջվում է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա և տվյալ պարագայում Ընթացակարգի հրավերի այն պահանջը, որ ***աուդիտորները պետք է ունեն ան վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում,*** գտնում ենք, որ օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 2017թ. և 2018թ. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգերի հրավերների շրջանակներում նման խստրական պահանջներ սահմանված չի եղել:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ Հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» վերտառությամբ 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը» ***պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:***

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է ***գնման առարկայի բնութագրերը,*** նախաորակավորման հայտարարության կամ ***իրավերի պահանջները,*** ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ բննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգով հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ (սահմանված 21 դեկտեմբերի, ժամը 10:00-ն), ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի <<բ>> պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտավորեցնել «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

   կամ

2. Պարտավորեցնել «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշները բաժնում, Հավելված 1-ը՝ <<Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում>> կատարել համապատասխան փոփոխություններ՝ Հրավերը համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝

«Ասատրյանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Ասատրյան

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» «ACATPЯHC» «ASATRYANS» 02618043

20. 12. 2018թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնանշման հարցման հանձնաժողովի 2018 թվականի «դեկտեմբերի» «14» թիվ «1» որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Գնանշման հարցման ծածկագիրը՝ ԵՊԼՀ-ԳՀՄՁԲ-19/02

Պատվիրատու՝ «ԵՊԼՀ» Հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Թումանյան 42 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (armeps.am) համակարգի միջոցով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել առևտրային ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 6-րդ օրը ժամը 10:00-ն(20.12.2018թ.) : Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 10:00-ը(21.12.2018թ.): Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 10:00-ը(21.12.2018թ.):

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Գոհար Ապրիկյանին

Հեռախոս 37411300-111/255/

էլ. փոստ gnumner.eplh@mail.ru

Պատվիրատու «ԵՊԼՀ» Հիմնադրամ

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն *ԵՊԼՀ-ԳՀՄՔԲ-19/02* ծածկագրով անցկացվող գնանշման հարցման (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «ԵՊԼՀ» հիմնադրամի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում www.armeps.am հասցեով գործող ինտերնետային կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Համակարգում մասնակցի գրանցման գործընթացը նկարագրված է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկում:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ *gnumner.eplh@mail.ru*

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում «ԵՂԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ «Աուդիտորական ծառայության» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Աուդիտորական ծառայություն

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Սույն հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝.

ըստ «Աուդիտորական ծառայության» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները)
1	2
1	Աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միության անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող

մասնակցել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն իրավերով սահմանված պայմաններով:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի,

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Եթե որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված

ռայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում Աուդիտորական ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը գրաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարման ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

2) «Տեխնիկական միջոցներ»որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

3) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով.

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները[2]

Մասնագետների աշխատանքային փորձ

[2] *Եթե «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա ենթակետից հանվում են այն պարբերությունները:*

որակավորումը	ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ:	Վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում : Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը նվազագույնը 5 տարի:	Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ: Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայական, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

2.6 Սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

2.7 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1)հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով`

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Ծառայության							
						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներ ի պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավոր	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	79211190	**Ձեռքբերվող Ծառայության նկարագիր** **Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ** Աուդիտի պետք է ենթարկվի ՖՀՄՍ-ների համապատասխան պատրաստված Պատվիրատուի տարեկան համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբեր 2018 թվական, այդ ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվությունը և այլ բացատրական ծանոթագրություններ: Պատվիրատուի նկամուտները 2018 թվականի ընթացքում կազմում է մոտ 1,3 մլրդ ՀՀ դրամ Անցկացված աուդիտի արդյունքում աուդիտ իրականացնող անձը պետք է արտահայտի կարծիք առ 31-ը դեկտեմբեր 2018 թվականի և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, ինչպես նաև հատատի www.Azdarar.am կայքում հրապարակվող տեղեկությունները Պատվիրատուի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:	դրամ			ք. Երևան, Թումանյան 42	*Գնումների մասին՝ ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում*

4

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN COUNTRIES UNTIL

20.12.2012

20.12.2015

5

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

«08» 09 1998 թ.

AH0259437

ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված գործառնության հաստատում

Գործառնության տեսակ՝ Վճարման հանձնարարական

Գործառնության համար՝ N 361

Գործառնության ամսաթիվ՝ 20.12.2018

Մանրամասներ

Տեսակ	Փոխանցում AMD-ով
Վճարող	ԱՍԱՏՐՅԱՆՍ ՄՊԸ
Վճարողի բանկ	ԻնեկոբանկՓԲԸ
Վճարողի հաշվի համար	2052022188681001
Հարկային կոդ	02618043
Վճարվող գումար	30,000.00 ՀՀ Դրամ
Վճարվող գումարը բառերով	Երեսուն հազար ՀՀ Դրամ զրո Լումա
Նպատակ	Ֆինանսների նախարարության մուտքեր
Հարկային տարածաշրջան	99 /Ֆինանսների նախարարության մուտքեր
Նպատակի բանկ	Կենտրոնական գանձապետարան
Նպատակի հաշիվ	900008000482
Մանրամասներ	Բողոքարկման համար վճար

Բանկի գրասենյակում

Փաստաթուղթը տպված է ԻնեկոՕնլայն համակարգից